

ԴԻԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության իրավաբանական անձանց պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Տնտեսական գլոբալիզացիան և միջազգային առևտուրը պատշաճ իրավական կարգավորման պարագայում կարող են բարենպաստ ազդեցություն ունենալ և հավասար հնարավորություններ ստեղծել ոչ միայն զարգացած, այլև զարգացող պետությունների համար: Ըստ Փիթեր Շուբերլանդի. «Տնտեսական ամենամեծ մարտահրավերը միջազգային համակարգ ստեղծելն է, որը ոչ միայն կնպաստի գլոբալ տնտեսական աճին, այլև կհանգեցնի գլոբալ հավասարության և կնպաստի զարգացած և միջազգային տնտեսությանը միանալու ջանքեր գործադրող մարզինալացված պետությունների ինտեգրմանը»¹: Նմանատիպ միջազգային առևտրային համակարգի առկայությունը պետք է ապահովված լինի հստակ իրավանորմային հիմքով, որը կերաշխավորի հետևյալ նպատակների իրագործումը.

- զսպել պետություններին՝ առևտուրը խստացնող միջոցներ կիրառելու դեպքում,
- այլ պետությունների առևտրային քաղաքականությունը կանխատեսելի դարձնելու միջոցով ապահովել ներդրողների համար անվտանգ միջավայր,
- միջազգային տնտեսական հարաբերություններում հասնել առավելագույն հավասարության,
- հաղթահարել միջազգային տնտեսական գլոբալիզացիայով պայմանավորված այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են մաքուր շրջակա միջավայրը, սպառողների անվտանգությունը, հանրային առողջությունը և այլն:

Թույլ տնտեսական, քաղաքական, ռազմական ներուժ ունեցող զարգացող պետությունների պարագայում միջազգային առևտրի իրավական կարգավորման անհրաժեշտությունն առավել ընդգծված է, քանի որ վերջիններիս համար իրա-

վական ամուր հիմքեր ունեցող առևտուրը նախընտրելի է ուժի վրա կառուցված տնտեսական հարաբերություններից: Հենց այս նպատակների իրագործման անհրաժեշտությամբ է պայմանավորված Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավունքի (այսուհետ՝ ԱՀԿ իրավունք) առկայությունը: Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավունքը, անշուշտ, միջազգային հանրային իրավունքի բաղկացուցիչն է, որը կանոնակարգում է ապրանքների և ծառայությունների առևտուրը և մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը²:

Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավունքի վերլուծությունը թույլ է տվել առանձնացնել կանոնների և սկզբունքների վեց հիմնական խումբ՝

- խտրականության արգելման սկզբունք,
- շուկայի մատչելիության վերաբերյալ կանոններ,
- անարդար առևտրի վերաբերյալ կանոններ,
- առևտրի ազատականացման և այլ սոցիալական արժեքների միջև հակասության վերաբերյալ կանոններ, ներառյալ՝ զարգացող երկրների համար հատուկ և տարբերակված մոտեցումները,
- հատուկ ոլորտներում ազգային օրենսդրության ներդաշնակեցմանն օժանդակող կանոններ,
- ընթացակարգային կանոններ³:

ԱՀԿ-ի ընթացակարգային և նյութական կանոնների ու սկզբունքների ամբողջությունը սովորաբար անվանում են բազմակողմ առևտրային համակարգ, որը գլոբալ տնտեսության կառավարման և զարգացման կարևոր գործիք է⁴:

ԱՀԿ-ի իրավունքի հիմնական աղբյուրն է Մարաբեշի համաձայնագիրը (կնքվել է 1994թ.-ի

www.lawinstitute.am

ապրիլի 15-ին և ուժի մեջ է մտել 1995թ.-ի հունվարի 1-ին), որով հիմնադրվեց Առևտրի համաշխարհային կազմակերպությունը: Այն մասն անվանվում է ԱՀԿ-ի համաձայնագիր, բաղկացած է 16 հոդված պարունակող հիմնական կարճ համաձայնագրից, մի շարք պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր պարունակող չորս հավելվածից⁵: Ըստ Համաձայնագրի երկրորդ հոդվածի՝ առաջին, երկրորդ և երրորդ հավելվածները պարտադիր իրավական ուժ ունեն ԱՀԿ-ի բոլոր անդամների համար (Multilateral Trade Agreements), այնինչ Հավելված չորրորդը (Plurilateral Agreements)՝ միայն այն անդամների համար, որոնք միացել են դրան⁶: Քանի որ ԱՀԿ-ի համաձայնագիրն ինքնին ներառում է մի շարք միջազգային պայմանագրեր, Առևտրի համաշխարհային կազմակերպության Վերաքննիչ մարմինը «Բրազիլիա-չորացրած կոկոս» գործով շեշտադրեց ԱՀԿ-ի համաձայնագրի «միասնական ըմբռնման» բնույթը՝ ամրագրելով, որ ԱՀԿ-ի բոլոր բազմակողմ պայմանագրերը (multilateral agreements) գործում են հավասարապես և հավասարապես պարտադիր են բոլոր անդամ պետությունների համար⁷: Միևնույն ժամանակ ԱՀԿ-ի համաձայնագրի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ԱՀԿ-ի համաձայնագրի և բազմակողմ պայմանագրերի միջև հակասության դեպքում գործում են համաձայնագրի դրույթները:

ԱՀԿ-ի նյութական իրավունքի հիմնական դրույթները ներառված են հավելված մեկում պարունակվող պայմանագրերում: Այս հավելվածը բաղկացած է երեք մասից.

- Առաջին հավելվածի առաջին մասը (1A) պարունակում է ապրանքների առևտրին վերաբերող տասներեք բազմակողմ պայմանագիր, որոնցից ամենակարևորը «Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիրն» է (GATT): Այն ընդունվել է Ուրուգվայի փուլի ընթացքում 1994թ.-ին և ներառում է 1947 թվականի «Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրից» բազմաթիվ դրույթներ: Ամբողջապես վերափոխված տեքստի ընդունումը անիրատեսական էր, ինչը պայմանավորված է համաձայնագրի առարկա հանդիսացող բազմաթիվ հարցերի շուրջ ծագած անհամաձայնությամբ: 1947 թ.-ի համաձայնագրի ամբողջական վերափոխումը կպահանջեր բազմաթիվ հոդվածների լայնածավալ փոփոխություն՝ արտացոլելու համար ինչպես համաձայնագրի մասնակից կողմերի կայացրած նախկին որոշումները, այնպես էլ Ուրուգվայի ժամանակ որդեգրած մոտեցումները:

Եթե այդ փոփոխությունների մի մասը կարող էր կատարվել առանց դժվարությունների, ապա մյուսները կառաջացնեին այնպիսի խնդիրներ, որոնք կպահանջեին վերանայել բանակցությունների արդյունքում ստորագրված համաձայնագրերը: Այդ իսկ պատճառով 1994թ. «Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիրը» (այսուհետ՝ ՄԱԳ-Հ 1994) ամբողջությամբ հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել մաս 1947թ.-ի համաձայնագիրը: Բանակցող կողմերը, գիտակցելով հնարավոր թյուրըմբռնումները, ԱՀԿ-ի համաձայնագրի 2-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրեցին. «Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիրը, ինչպես նշված է հավելված 1A-ում իրավաբանորեն տարանջատված է 1947 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրից (այսուհետ՝ ՄԱԳ-Հ 1947)»: Թեև ՄԱԳ-Հ 1947-ը 1996 թվականից ուժը կորցրած է ճանաչվել, սակայն դրա որոշ դրույթներ ներառված են ՄԱԳ-Հ 1994-ի մեջ: ԱՀԿ-ի համաձայնագրում ներառվել է մաս ՄԱԳ-Հ 1947-ի ամբողջական տեքստը: ՄԱԳ-Հ 1994-ը հիմնականում կարգավորում է ազգերի առավել բարենպաստության մոտեցումը (հոդված I), մաքսային զիջումները (հոդված II), ազգային մոտեցման սկզբունքը (հոդված III), քանակական սահմանափակումները (հոդված IV) ընդհանուր և անվտանգության նպատակով բացառությունները (XX, XXVI):

Բացի ՄԱԳ-Հ-ից հավելված 1A-ն պարունակում է մաս ապրանքների առևտրին վերաբերող մի շարք այլ բազմակողմ պայմանագրեր, մասնավորապես՝ «Գյուղատնտեսության մասին համաձայնագիր», «Մանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագիր», «Տեքստիլի և հագուստեղենի մասին», «Առևտրի տեխնիկական արգելքների մասին», «Առևտրին առնչվող ներդրումային միջոցառումների մասին», «Հակազնազգման մասին», «Մաքսային արժեքի գնահատման», «Ծագման կանոնների մասին», «Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին», «Մուրաբիդիաների և հակազդման միջոցառումների մասին», «Պաշտպանական միջոցառումների մասին» համաձայնագրեր: Ապրանքների առևտրին վերաբերող այս բազմակողմ համաձայնագրերը առավել մանրակրկիտ են կարգավորում առևտրային հարաբերությունները և երբեմն անգամ հակասում են ՄԱԳ-Հ 1994թ-ի դրույթներին: Այս խնդիրը կարգավորվում է հավելված 1A-ի պարզաբանման հուշագրում, որտեղ մասնա-

վորապես, նշվում է. «1994թ. Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի և Առևտրի համաշխարհային կազմակերպության հիմնադրման համաձայնագրի հավելված 1A-ի մեջ ներառված այլ համաձայնագրերի միջև հակասության դեպքում վերջիններիս դրույթները գերակա են»⁸: Այնուամենայնիվ, այս պարզաբանումը կիրառելի է միայն դրույթների միջև հակասության առկայության դեպքում: Այլ դեպքերում համաձայն «Արգենտինա-ուստնաման (ԵՄ)» գործով Վերաքննիչ մարմնի կայացրած որոշման, ՄԱԳ-Հ 1994-ը և Հավելված 1A-ի այլ բազմակողմ պայմանագրերը մեկ համաձայնագրի բաղկացուցիչ մաս են և պարտադիր ու հավասարապես են կիրառելի բոլոր անդամ պետությունների համար⁹:

- Հավելված առաջինի երկրորդ մասը (1B) ներառում է Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը (GATS), որը ծառայությունների ոլորտը կարգավորող առաջին բազմակողմ պայմանագիրն է: Ըստ համաձայնագրի ծառայությունների մատուցումը ներառում է՝ անդամ երկրի տարածքից մյուս անդամ երկրի տարածք (սահմանի վրայով մատուցում), անդամ երկրի տարածքում մյուս անդամ երկրի սպառողին մատուցում (սպառում արտասահմանում), ծառայությունների մատուցում տվյալ երկրում մեկ այլ երկրի մատուցողի առևտրային ներկայացուցչության միջոցով (առևտրային ներկայացուցչության միջոցով մատուցում), մի անդամ երկրի ծառայություն մատուցողը այլ անդամ երկրի քաղաքացիներին ցանկացած այլ անդամ երկրի տարածքում (քաղաքացիների միջոցով մատուցում)¹⁰:

Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը պարունակում է նաև ազգերի առավել բարենպաստության մոտեցման, թափանցիկության, զարգացող երկրների մասնակցության աճի, տնտեսական ինտեգրման, ազգային մոտեցման, ընդհանուր բացառությունների, վեճերի լուծման վերաբերյալ դրույթներ:

ԱՀԿ Վերաքննիչ մարմինը «ԵՄ-բանաններ III» գործով «Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի» և «Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի» փոխազդեցության և կիրառելիության վերաբերյալ պարզաբանել է, որ ԾԱԳ-Հ-ն և ՄԱԳ-Հ-ն կարգավորում են տարբեր հարաբերություններ և կարգավորման առարկան կարող է համընկնել միայն այն դեպքում, երբ ծառայությունը կապված է կոնկրետ ապրանքի հետ: Այս դեպքում, պայմանավորված կոնկրետ հարա-

բերության բնույթով, հարաբերությունները երբեմն պետք է միաժամանակ կարգավորվեն երկու համաձայնագրով¹¹:

- Առաջին հավելվածի երրորդ մասը (1C) ներառում է «Մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի համաձայնագիրը» (TRIPS): Այն հիմնված է մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ միջազգային կոնվենցիաների վրա՝ հնարավորություն ընձեռելով անդամ-պետություններին ապահովելու մտավոր սեփականության իրավունքների պաշտպանվածության ավելի բարձր մակարդակ: «Մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի համաձայնագիրը» առնչվում է մտավոր սեփականության ոլորտին, մասնավորապես՝ հեղինակային և հարակից իրավունքներին, ապրանքային նշաններին, ծագման տեղանուններին, արդյունաբերական նմուշներին, գյուտերի արտոնագրերին, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաներին, չբացահայտված տեղեկատվության պաշտպանությանը:

ԱՀԿ-ի համաձայնագրի 2-րդ և 3-րդ հավելվածները համապատասխանաբար ներառում են «Վեճերի լուծման կանոնների և ընթացակարգերի վերաբերյալ համաձայնագիրը» և «Առևտրային քաղաքականության վերանայման մեխանիզմները»: Վեճերի լուծման կանոնների և ընթացակարգերի վերաբերյալ համաձայնագիրը Ուրուգվայի բանակցությունների կարևորագույն ձեռքբերումներից է: ԱՀԿ-ի վեճերի կարգավորման մեխանիզմը բազմակողմ առևտրային համակարգի սյունն է և իր ուրույն ներդրումն ունի համաշխարհային տնտեսության կայունացման գործում: Ինչ վերաբերում է Առևտրային քաղաքականության վերանայման մեխանիզմներին, ապա ԱՀԿ-ի անդամ պետությունների, առևտրի մեջ ներգրավված քաղաքացիների և կազմակերպությունների համար չափազանց կարևոր է իրազեկ լինել ԱՀԿ-ի մյուս անդամ պետությունների կողմից իրականացվող առևտրային քաղաքականությանը և դրա հիմքում ընկած օրենսդրությանը: Այդ իսկ պատճառով ԱՀԿ-ի մի շարք համաձայնագրերով անդամ պետությունները պարտավորվում են այլ անդամ պետություններին տեղեկացնել առևտրային նոր կարգավորումների և ընթացիկ քաղաքականության փոփոխությունների վերաբերյալ:

ԱՀԿ-ի համաձայնագրի 4-րդ հավելվածը ևս պարունակում է նյութական իրավունքի նորմեր: Մասնավորապես՝ այն բաղկացած է «Քաղաքացի-

ական ավիացիայի մասին» և «Պետական գնումների մասին» համաձայնագրերից, որոնք սակայն պարտադիր են միայն այն անդամ պետությունների համար, որոնք միացել են դրանց: Պետք է նաև նշել, որ ի տարբերություն «Պետական գնումների վերաբերյալ համաձայնագրից» բխող վեճերի¹², «Զաղաքացիական ավիացիայի մասին համաձայնագրի» հետ կապված վեճերը չեն կարող քննության առարկա դառնալ Վեճերի կարգավորման մարմնի կողմից:

Բացի ԱՀԿ-ի իրավունքի հիմնական աղբյուր հանդիսացող ԱՀԿ-ի համաձայնագրից, ԱՀԿ-ի իրավունքի աղբյուր են նաև ԱՀԿ-ի Վեճերի կարգավորման զեկույցները, ԱՀԿ-ի մարմինների ակտերը, ԱՀԿ-ի անդամների պրակտիկան և միջազգային իրավունքի բոլոր աղբյուրները:

ԱՀԿ-ի Վեճերի կարգավորման զեկույցները¹³, հատկապես Վերաքննիչ մարմնի զեկույցները հանդիսանում են ԱՀԿ-ի իրավունքի կարևոր աղբյուրներից մեկը: Թեև դրանք պարտադիր են միայն վեճի կողմ հանդիսացող պետությունների համար, սակայն Վերաքննիչ մարմինը նշում է, որ անգամ այս հանգամանքը չի խոչընդոտում դատարանի (և իր իրավաբանախորհի) կողմից նախադեպի համակարգի զարգացմանը, որի պարագայում նախկին որոշումները համոզիչ մեծ նշանակություն ունեն և վեճի հանգամանքների նմանության պարագայում դատական կազմից ակնկալվում է հետևել Վերաքննիչ մարմնի նախկին եզրակացություններին¹⁴:

ԱՀԿ-ի մարմինների ակտերը, մասնավորապես՝ հեղինակավոր մեկնաբանությունները և պարտավորությունից հրաժարումները (waiver)¹⁵, ևս հանդիսանում են ԱՀԿ-ի իրավունքի աղբյուր և անդամ պետությունների համար առաջացնում են իրավունքներ և պարտականություններ, որոնք կարող են հարկադրաբար կիրառվել Վեճերի կարգավորման մարմնի կողմից¹⁶: ԱՀԿ-ի մարմինների այլ ակտերը ևս ԱՀԿ-ի իրավունքի բաղկացուցիչ մաս են, սակայն չեն կարող առաջացնել իրավունքներ և պարտականություններ կամ խախտման դեպքում բողոքարկման հիմք դառնալ:

Որպես միջազգային իրավունքի բաղկացուցիչ՝ ԱՀԿ-ի իրավունքի աղբյուրներ են նաև միջազգային իրավունքի աղբյուրները: Այսպես՝ ըստ «Վեճերի կարգավորման կանոնների և ընթացակարգերի վերաբերյալ համաձայնագրի» 3.2-րդ հոդվածի «Անդամները ընդունում, են որ ԱՀԿ-ի վեճերի կարգավորման համակարգը կոչված է պահ-

պանելու անդամների՝ համաձայնագրերով նախատեսված իրավունքները և պարտականությունները և հատկեցնելու այդ համաձայնագրերի դրույթները՝ միջազգային հանրային իրավունքի մեկնաբանման սովորութային կանոններին համապատասխան»: Այս դրույթը հստակ ամրագրում է, որ պայմանագրերի մեկնաբանման վերաբերյալ սովորութային իրավունքը կիրառելի է ԱՀԿ-ի շրջանակներում: Ինչ վերաբերում է սովորութային իրավունքի այլ դրույթներին, ապա «Կորեա-պետական գնումներ» գործով դատական կորպուսը ընդունել է սովորութային իրավունքի նորմերի կիրառելիությունը ԱՀԿ-ի շրջանակներում այնքանով, որքանով կարգավորման ենթակա հարաբերություններն ԱՀԿ-ի համաձայնագրերով կարգավորված չեն¹⁷: Նույն մոտեցումը վերաբերելի է նաև միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներին, որոնք կոչված են լրացնելու իրավունքի բացերը¹⁸:

Միջազգային իրավունքի պայմանագրերը ևս հանդիսանում են ԱՀԿ-ի իրավունքի աղբյուր: Օրինակ՝ «Մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի համաձայնագիրը» հղում է կատարում մտավոր սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորող մի շարք այլ միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ Փարիզի (1967) և Բեռնի (1971) կոնվենցիաներին, այդպիսով՝ այդ համաձայնագրերի դրույթները դարձնելով ԱՀԿ-ի իրավունքի բաղկացուցիչ: Խնդրահարույց է ԱՀԿ-ի շրջանակներում այդ պայմանագրերի կիրառելիության սահմանների հարցը, հատկապես՝ բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի և աշխատանքի նվազագույն չափանիշներին վերաբերող Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների պարագայում: Դրանք զգալի դեր ունեն ԱՀԿ-ի իրավական դրույթների մեկնաբանման գործում: Ըստ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի՝ պայմանագրերի դրույթների մեկնաբանման ժամանակ պետք է հաշվի առնել կողմերի հարաբերությունների միջև կիրառելի միջազգային իրավունքի ցանկացած կանոն: Միասնական մոտեցում դեռևս չկա այն հարցի վերաբերյալ, թե այլ միջազգային պայմանագրերով սահմանված՝ կողմերի իրավունքների և պարտականությունների խախտման դեպքերը կարող են արդյոք դառնալ ԱՀԿ-ի Վեճերի կարգավորման մարմնի քննության առարկա: Ըստ Ջուստ Պաուլելիների, թեև ԱՀԿ-ի անդամ պետությունները ոչ ԱՀԿ համաձայ-

նագրով սահմանված իրավունքների խախտման համար չեն կարող դիմել Վեճերի կարգավորման մարմնին, այնուամենայնիվ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող պետությունները դրանք կարող են վկայակոչել որպես պաշտպանության միջոց¹⁹ : Այս դիրքորոշումը միանշանակ չի ընդունվում, քանի որ գիտնականներից շատերը դեմ են ոչ ԱՀԿ պայմանագրերով նախատեսված դրույթները որպես պաշտպանության միջոց օգտագործելու հնարավորության: Սակայն, հիմք ընդունելով այն փաստը, որ ԱՀԿ-ի իրավունքը միջազգային հանրային իրավունքի բաղկացուցիչն է, կարծում ենք՝ ոչ ԱՀԿ համաձայնագրերը Վեճերի կարգավորման մարմնում դրանց կողմ հանդիսացող պետությունների կողմից կարող են վկայակոչվել:

ԱՀԿ-ի իրավունքի աղբյուրների ձևավորման օժանդակ միջոցներ են հանրային իրավունքի հարցերով հանրաճանաչ մասնագետների դոկտրինները, որոնք ԱՀԿ-ի վեճերի կարգավորման մարմնի համար օժանդակ նյութեր են որոշումների պատճառաբանական մասը գրելու համար:

ԱՀԿ-ի իրավունքի համապարփակ ուսումնասիրության համար անհրաժեշտ է նաև քննարկել ԱՀԿ-ի և միջազգային իրավունքի հարաբերակցության, ինչպես նաև ներպետական իրավական համակարգում ԱՀԿ-ի իրավունքի դերակատարության հետ կապված խնդիրները:

Տնտեսական գլոբալիզացիայի ներկա դարաշրջանում, երբ տնտեսական հարաբերությունները հատել են ներպետական սահմանները, այդ հարաբերությունների պատշաճ միջազգային իրավական կարգավորումը դարձել է առաջնային անհրաժեշտություն, ինչով էլ պայմանավորված է միջազգային տնտեսական իրավունքի, մասնավորապես՝ ԱՀԿ-ի իրավունքի պրոգրեսիվ զարգացումը: ԱՀԿ-ի իրավունքը հաճախ բնորոշվում է որպես միջազգային իրավունքի նոր սահմանագիծ²⁰ : Ի տարբերություն նախկինում գոյություն ունեցող այն մոտեցման, որ ԱՀԿ-ի իրավունքը մեկուսացված, փակ և անկախ համակարգ է²¹, ներկայումս միջազգային իրավունքի գիտնականներից շատերը ԱՀԿ-ի իրավունքը դիտում են որպես միջազգային իրավունքի բաղկացուցիչ²² : Նման դիրքորոշման ձևավորման գործում վճռորոշ դեր ունեցավ «ԱՄՆ-բենգին» գործով Վերաքննիչ մարմնի գեկույցը, որում շեշտադրվեց, որ ԱՀԿ-ի համաձայնագիրը չպետք է դիտվի որպես միջազգային իրավունքից մեկուսացված փաստաթուղթ²³ : Այս դեպքում հնարավոր է ԱՀԿ-ի համաձայնագրերով նա-

խատեսված անդամների իրավունքները և պարտականությունները հակասեն միջազգային այլ պայմանագրերով նախատեսված պարտականություններին: Նման իրավիճակ առաջանում է, օրինակ՝ երբ բազմակողմ բնապահպանական պայմանագրերով անդամ պետությունները պարտավորվում են կիրառել քանակական սահմանափակումներ կոնկրետ ապրանքատեսակների նկատմամբ՝ ելնելով բնապահպանական նկատառումներից, այնինչ 1994թ.-ի «Ապրանքների առևտրի գլխավոր համաձայնագրով» այդպիսի սահմանափակումներ կիրառելը անթույլատրելի է: Այս կապակցությամբ ԱՀԿ-ի գլխավոր տնօրեն Պասկալ Լամին նշել է, որ ԱՀԿ-ի նորմերը չեն փոխարինում միջազգային իրավունքի այլ նորմերին և չեն գերակայում դրանց նկատմամբ²⁴ :

Իրավաբանական դոկտրինայում գերիշխում է այն տեսակետը, որ ԱՀԿ-ի կանոնները հնարավորինս պետք է մեկնաբանվեն այնպես, որպեսզի չհակասեն միջազգային իրավունքի այլ նորմերին²⁵ : Սակայն, այս մոտեցումը ևս խնդրի լուծում համարվել չի կարող, քանի որ հաճախ ելնելով նորմերի միջև հակասության բնույթից, հնարավոր չէ նորմերի նման մեկնաբանությամբ խուսափել հակասությունից: Խնդրի լուծման ուրույն մոտեցում է առաջարկում Ջուստ Պաուլելիերը: Ըստ նրա՝ ի տարբերություն ընդհանուր բնույթի պարտավորությունների՝ ԱՀԿ-ի պարտավորություններից շատերը կոնկրետ կողմերի միջև փոխադարձ բնույթի պարտավորություններ են, ուստիև դրանցից կարելի է շեղվել այնքանով, քանի դեռ երրորդ կողմի իրավունքները չեն խախտվել: Այնինչ, նման մոտեցում չի կարելի դրսևորել ընդհանուր բնույթ կրող պարտավորությունների նկատմամբ, ինչպիսիք են օրինակ՝ բնապահպանական, մարդու իրավունքների հետ կապված պարտավորությունները: Հետևաբար, ԱՀԿ-ի և բնապահպանական, մարդու իրավունքների կամ ընդհանուր բնույթ կրող նմանատիպ նորմերի միջև հակասության դեպքում վերջիններս պետք է գերակայեն և վեճի առկայության դեպքում ԱՀԿ-ի Վեճերի կարգավորման մարմնը պետք է առաջնորդվի այդ նորմերով²⁶ : Սակայն, այս տեսակետը ևս քննադատության է արժանացել: Մասնավորապես, ըստ Գաբրիել Մարկոյի՝ անգամ եթե ԱՀԿ-ի Վեճերի կարգավորման մարմնը ղեկավարվի ոչ թե ԱՀԿ-ի համաձայնագրերով նախատեսված դրույթներով, այլև՝ միջազգային իրավունքի այլ նորմերով, ապա այն չի կարող, հիմնվելով այդ դրույթներ վրա, ավելացնել կամ

նվազեցնել անդամ պետությունների իրավունքները և պարտականությունները, կամ ազդել երրորդ անդամ պետության իրավունքների վրա²⁷ :

Ներպետական օրենսդրության և ԱՀԿ-ի իրավունքի հարաբերակցությունը պետք է քննարկել երկու հարթությամբ՝ ԱՀԿ-ի իրավունքի ազդեցությունը ներպետական իրավունքի վրա և ներպետական իրավունքի դերակատարությունը ԱՀԿ իրավունքում:

ԱՀԿ-ի իրավական համակարգում ներպետական իրավունքի տեղի վերաբերյալ հարցը քննարկելիս՝ անհրաժեշտ է անդրադառնալ Վեճերի կարգավորման մարմնի կողմից ներպետական օրենսդրության կիրառելիության հնարավորությանը: Այդ կապակցությամբ Վերաքննիչ մարմինը «Հնդկաստան–արտոնագիր» գործով զեկույցում պարզաբանել է, որ ներպետական օրենսդրությունը այս դեպքում կարող է ծառայել որպես փաստերի և պետությունների պրակտիկայի վերաբերյալ ապացույց: Ներպետական օրենսդրության և ԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների համապատասխանությունը գնահատելու նկատառումով Վեճերի կարգավորման մարմնի կողմից բազմիցս ուսումնասիրության է ենթարկվել անդամ պետությունների ներպետական օրենսդրությունը: Այս կապակցությամբ Թոմաս Կոտիերը կարևորում է ոչ միայն ԱՀԿ-ի իրավունքին ներպետական օրենսդրության, այլ նաև այդ օրենսդրության կիրառման համապատասխանությունը (իրավակիրառ պրակտիկա)²⁸ :

Ներպետական իրավունքում ԱՀԿ-ի իրավունքի նշանակությունը սահմանվում է ԱՀԿ-ի համաձայնագրի XVI:4 հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր անդամ պետք է ապահովի իր օրենքների, կարգավորումների և վարչական ընթացակարգերի համապատասխանությունը ԱՀԿ-ի Համաձայնագրի Հավելվածներով սահմանված իր պարտավորություններին»: Այս դրույթը բխում է «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 27-րդ հոդվածից, այն է. «Կողմը չի կարող վկայակոչել իր ներպետական օրենքի դրույթները՝ պայմանագրից բխող իր պարտավորությունների ձախողելը արդարացնելու համար»: Նույն դիրքորոշումը իր ամրագրումն է ստացել «Բրազիլիա-ինքնաթիռ» գործով Վերաքննիչ մարմնի զեկույցում, մասնավորապես. «...ԱՀԿ-ի անդամի ներպետական օրենսդրությունը չի ազատում Անդամին իր միջազգային պարտավորությունները կատարելուց»²⁹ :

Հետևաբար, ներպետական օրենսդրության ներդաշնակեցումը ապրանքների և ծառայությունների առևտրի միջազգային կանոններին նպաստում է միջազգային առևտրի զարգացմանը: Միայն այս պարագայում է ներպետական օրենսդրությունը դադարում անդրսահմանային առևտրի խոչընդոտ լինել:

Տեսաբանները նաև համակարծիք են, որ ազգային օրենսդրության մեկնաբանությունը չպետք է հակասի ԱՀԿ-ի իրավունքին: Այս մոտեցումը կոչվում է «պայմանագրին համապատասխան մեկնաբանություն»³⁰, և բխում է 1947թ.-ի «Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի» վերաբերյալ Եվրոպական արդարադատության դատարանի «Հանձնաժողովը ընդդեմ Գերմանիայի» գործով կայացրած որոշումից, որի համաձայն՝ եթե ներպետական օրենսդրության բովանդակությունը մեկից ավելի մեկնաբանությունների հնարավորություն է ընձեռում, ապա նախապատվությունը պետք է տալ Համաձայնագրի դրույթների հետ հակասություն չառաջացնող մեկնաբանությանը³¹ : Եթե նման մեկնաբանությունը հնարավոր չէ, ապա վիճելի է՝ արդյոք ԱՀԿ-ի իրավունքը կարող է վկայակոչվել ազգային դատարաններում ներպետական օրենսդրության օրինականության վիճարկման համար: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է ԱՀԿ-ի իրավունքի անմիջական, ուղղակի գործողությանը և կիրառելիությանը: Ըստ ԱՀԿ-ի իրավունքի ուղղակի գործողության կողմնակից Յան Թումիրիի՝ ուղղակի գործողությունը պրոտեկցիոնիզմի դեմ պայքարի անհրաժեշտ և արդյունավետ միջոց է³² : Հակառակ տեսակետ է հայտնել Ջոն Ջեկսոնը, ըստ որի ԱՀԿ-ի իրավունքի ուղղակի գործողությունը հակասում է ժողովրդավարության սկզբունքին և ազգային օրենսդիր մարմնի գործառույթներին³³ : Միջանկյալ տեսակետ է արտահայտել Փիթ Էքհաուրը, ով, մասամբ ժխտելով ԱՀԿ-ի իրավունքի անմիջական գործողությունը, բացառություն է համարում Վեճերի կարգավորման մարմնի կողմից կոնկրետ պետության վերաբերյալ կայացրած որոշումները, որոնք այդ պետության ներպետական օրենսդրության մեջ ուղղակի կիրառելի են³⁴ : Այնուամենայնիվ, խնդիրը ոչ այնքան տեսական լուծման կարիք ունի, որքան պայմանավորված է միջազգային իրավունքի, մասնավորապես՝ ԱՀԿ-ի իրավունքի աղբյուրների՝ կոնկրետ պետության օրենսդրությամբ ամրագրված կարգավիճակով: Ներկայումս ԱՀԿ-ի անդամներից շատերը, ներառյալ՝ Եվրոպական միություն-

նը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան, Կանադան հրաժարվում են ԱՀԿ-ի իրավունքը ճանաչել որպես ուղղակի գործող իրավունք:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է ասել, որ թեև Առևտրի համաշխարհային կազմակերպությունը բոլոր հիմնական միջկառավարական կազմակերպություններից ամենաերիտասարդն է, այնուամենայնիվ ԱՀԿ-ի իրավունքը որպես միջազգային հանրային իրավունքի բաղկացուցիչ մաս, տնտեսական գլոբալիզացիայի ներկայիս ժամանակաշրջանում ամենաազդեցիկներից մեկն է: Համաձայնվելով Մարկո Բրոնկերսի այն տեսակետի հետ, որ ԱՀԿ-ն ի շնորհիվ իր ինստիտուցիոնալ կարողությունների «գլոբալ կառավարման հիմնասյուն դառնալու ներուժ ունի»³⁵, կարելի է փաստել նաև, որ ԱՀԿ-ի իրավունքը ազատականացված, կանխատեսելի, առանց խտրականության առևտրային համակարգի, հետևաբար նաև պետությունների զարգացման և բարգավաճման երաշխիքն է: Այնուամենայնիվ, ԱՀԿ իրավունքը շարունակում է զարգանալ՝ առաջադրելով լուծում պահանջող նոր իրավական խնդիրներ: Այդ կապակցությամբ սույն հոդվածի շրջանակներում կատարված վերլուծությունը թույլ է տալիս ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

1) ԱՀԿ-ի իրավունքը միջազգային հանրային իրավունքի ենթաճյուղ է, հետևաբար միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները կիրառելի են Առևտրի համաշխարհային իրավունքի շրջանակներում առաջացող հարաբերությունների նկատմամբ, սակայն այնքանով, որքանով կարգավորման ենթակա հարաբերություններն ԱՀԿ-ի համաձայնագրերով կարգավորված չեն:

2) Ոչ ԱՀԿ համաձայնագրերով սահմանված իրավունքների խախտման համար անդամ պետությունները չեն կարող դիմել Վեճերի կարգավորման մարմնին, այնուամենայնիվ կարող են դրանք վկայակոչել որպես պաշտպանության միջոց:

3) Եթե ԱՀԿ-ի համաձայնագրերով նախատեսված անդամների իրավունքները հակասում են միջազգային այլ պայմանագրերով նախատեսված պարտավորություններին, ապա ԱՀԿ-ի կանոնները պետք է մեկնաբանվեն այնպես, որպեսզի չհակասեն միջազգային իրավունքի այլ նորմերին՝ հատկապես այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է ոչ թե երկկողմ այլ ընդհանուր բնույթ կրող պարտավորություններին: Նման պայմաններում ընդհանուր բնույթ կրող պարտավորությունները պետք է գերակայեն ԱՀԿ կանոնների նկատմամբ:

4) Ազգային օրենսդրության մեկնաբանությունը չպետք է հակասի ԱՀԿ-ի իրավունքին: Եթե ներպետական օրենսդրության բովանդակությունը մեկից ավելի մեկնաբանությունների հնարավորություն է ընձեռում, ապա նախապատվությունը պետք է տալ ԱՀԿ Համաձայնագրի դրույթների հետ հակասություն չառաջացնող մեկնաբանությանը:

5) Թեև ԱՀԿ-ի իրավունքը ներպետական իրավական համակարգում կարող է դիտվել որպես պրոտեկցիոնիզմի դեմ պայքարի անհրաժեշտ և արդյունավետ միջոց, սակայն դրա ուղղակի գործողության հնարավորությունը պայմանավորված է ԱՀԿ-ի իրավունքի աղբյուրների՝ կոնկրետ պետության օրենսդրությամբ ամրագրված կարգավիճակով:

¹ Տե՛ս Shuterland P. “Beyond the Market, a Different Kind of Equity”, International Herald Tribune, 20 February 1997.

² Տե՛ս Pauwelyn J. Conflict of Norms in Public International Law: How WTO Law Relates to Other Norms of International Law (Cambridge University Press, 2003), էջ 25-29: Հասանելի է <http://books.google.com/books?hl=en&lr=&id=0mCXrGWIFTUC&oi=fnd&pg=PR11&dq=Development+of+the+WTO+law+&ots=fzFV6D4hYZ&sig=d9Nrwn1Zn4VBJugpgz13FDX0cXA#v=onepage&q=Development%20of%20the%20WTO%20law&f=false> կայքում (14.04.2010 դրությամբ):

³ Տե՛ս Peter Van Den Bossche, The Law and the Policy of the world trade organization: Text Cases and Materials. Cambridge University Press, 2008, էջ 32-42:

⁴ Տե՛ս Shuterland P., Sewell J. and Weiner D. , “Challenges Facing the WTO and Policies to Address Global Governance”, in Sampson G. (ed.), The Role of the World Trade Organization in Global Governance (United Nations University Press, 2001), 81:

⁵ Տե՛ս Համաձայնագրի ամբողջական տեքստը հասանելի է www.wto.org կայքում:

⁶ Տե՛ս David Palmeter; Petros C. Mavroidis, WTO Legal System: Sources of Law, American Journal of International Law, Vol. 92, pp. 398-414, (1998):

⁷ Տե՛ս Վերաքննիչ մարմնի զեկույցը «Բրազիլիա-չորացրած կոկոս» գործով, էջ 177: Հասանելի է www.wto.org կայքում

(02.04.2010թ. դրությամբ):

⁸ Տե՛ս General interpretative note to Annex 1A of WTO Agreement: Հասանելի է http://www.wto.org/english/docs_e/legal_e/05-anx1a_e.htm կայքում (05.04.2010 դրությամբ):

⁹ Տե՛ս Appellate Body Report, Argentina – Footwear (EC) , January 12, 2000, para. 81: Հասանելի է http://www.wto.org/english/tratop_e/dispu_e/cases_e/ds121_e.htm կայքում (05.04.2010 դրությամբ):

¹⁰ Տե՛ս Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը (GATS), հոդված I:2: Պայմանագրի տեքստը հասանելի է <http://www.wto.org> կայքում (05.04.2010 դրությամբ):

¹¹ Տե՛ս Appellate Body Report, EC – Bananas III, para. 221: Հասանելի է http://www.wto.org/english/tratop_e/dispu_e/ab_reports_e.htm կայքում (08.04.2010 դրությամբ):

¹² Տե՛ս Վեճերի կարգավորման մարմինը Պետական գնումների վերաբերյալ համաձայնագրից բխող վեճ լսել է Կորեայի գործով: Տե՛ս Panel Report, Korea – Procurement, 1 May 2000, Հասանելի է [http://www.worldtradelaw.net/reports/wtopanelsfull/korea-govprocurement\(panel\)\(full\).pdf](http://www.worldtradelaw.net/reports/wtopanelsfull/korea-govprocurement(panel)(full).pdf) կայքում (08.04.2010 դրությամբ):

¹³ Տե՛ս Հարկ է նշել, որ Սաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրով գործող նախկին դատական կազմի զեկույցները ևս հանդիսանում են ԱՀԿ-ի իրավունքի աղբյուր: Նման մոտեցումն իր ամրագրումն է ստացել «Ճասպոնիա - ակրոհոլային ընկերություն II» գործով Վերաքննիչ մարմնի զեկույցում: Չեկույցի ամբողջական տեքստը հասանելի է http://www.wto.org/english/tratop_e/dispu_e/dispu_settlement_cbt_e/a1s1p1_e.htm կայքում (12.04.2010 դրությամբ):

¹⁴ Տե՛ս Appellate Body Report, US – Shrimp (Article 21.5 - Malaysia), 12 October 1998, para. 109: Ամբողջական տեքստը հասանելի է <http://docsonline.wto.org/DDFDocuments/t/WT/DS/58ABR.doc> կայքում (12.04.2010 դրությամբ): Տե՛ս Appellate Body Report US- oil Country Tubular Goods Sunset Review, para 188: Ամբողջական տեքստը հասանելի է http://www.wto.org/english/tratop_e/dispu_e/cases_e/ds268_e.htm կայքում (12.04.2010 դրությամբ):

¹⁵ Տե՛ս պարտավորությունից հրաժարումները (waiver) ԱՀԿ-ի անդամների կողմից որևէ անդամ պետությանը տրամադրած արտոնությունն է՝ շեղվել ստանձնած պարտավորություններից: Իրավունքից հրաժարումները կիրառվում են սահմանափակ ժամկետի ընթացքում և պետք է հիմնավորված լինեն:

¹⁶ Տե՛ս Peter Van Den Bossche, The Law and the Policy of the world trade organization: Text Cases and Materials. Cambridge University Press, 2008, էջ 55:

¹⁷ Տե՛ս Panel Report, Korea – Procurement, 1 May 2000, Հասանելի է [http://www.worldtradelaw.net/reports/wtopanelsfull/korea-govprocurement\(panel\)\(full\).pdf](http://www.worldtradelaw.net/reports/wtopanelsfull/korea-govprocurement(panel)(full).pdf) կայքում (08.04.2010 դրությամբ):

¹⁸ Տե՛ս ԱՀԿ-ի շրջանակներում միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների կրառելիության վերաբերյալ տես Appellate Body Report, US – Shrimp, para. 158: Ամբողջական տեքստը հասանելի է <http://docsonline.wto.org/DDFDocuments/t/WT/DS/58ABR.doc> կայքում (12.04.2010 դրությամբ):

¹⁹ Տե՛ս Pauwelyn J. Conflict of Norms in Public International Law: How WTO Law Relates to Other Norms of International Law (Cambridge University Press, 2003), 473-491: Հասանելի է <http://books.google.com/books?hl=en&lr=&id=0mCXrGWIFTUC&oi=fnd&pg=PR11&dq=Development+of+the+WTO+law+&ots=fzFV6D4hYZ&sig=d9Nrwn1Zn4VBJugpgz13FDX0eXA#v=onepage&q=Development%20of%20the%20WTO%20law&f=false> կայքում (14.04.2010 դրությամբ):

²⁰ Տե՛ս McRae D. The contribution of International Trade Law to the Development of International Law, Academy of International Law, Recueil des Course, vol. 260, 1996, pp 114-115:

²¹ Տե՛ս Kuijper P. J. “The Law of GATT as a Special Field of International Law: Ignorance, Further refinement or Self-Contained System of International Law?”, Netherlands Yearbook of International Law, 1994, էջ 257:

²² Տե՛ս Evans M. D. International Law (Oxford University Press, 2006); G. T. Tigger, International Law: Contemporary Principles and Practices (Butterworths, 2006):

²³ Տե՛ս Appellate Body Report, US – Gasoline, para. 16, 29 April 1996: Ամբողջական տեքստը հասանելի է [http://www.worldtradelaw.net/reports/wtoab/us-gasoline\(ab\).pdf](http://www.worldtradelaw.net/reports/wtoab/us-gasoline(ab).pdf), կայքում (15.04.2010 դրությամբ):

²⁴ Տե՛ս Lamy P. “The Place of the WTO and Its Law in International Legal Order”, European Journal of International Law, 2007, էջ. 978:

²⁵ Տե՛ս Marceau G. “Conflicts of Norms and Conflicts of Jurisdiction: The relationship between the WTO Agreements and MEAs and Other Treaties”, Journal of World Trade, 2001, էջ 1129:

²⁶ Տե՛ս Pauwelyn J. Conflict of Norms in Public International Law: How WTO Law Relates to Other Norms of International Law (Cambridge University Press, 2003), էջ 491: Հասանելի է <http://books.google.com/books?hl=en&lr=&id=0mCXrGWIFTUC&oi=fnd&pg=PR11&dq=Development+of+the+WTO+law+&ots=fzFV6D4hYZ&sig=d9Nrwn1Zn4VBJugpgz13FDX0eXA#v=onepage&q=Development%20of%20the%20WTO%20law&f=false> կայքում (14.04.2010 դրությամբ):

²⁷ Տե՛ս Marceau G. “Conflicts of Norms and Conflicts of Jurisdiction: The relationship between the WTO Agreements and MEAs and Other Treaties”, Journal of World Trade, 2001, էջ 1130:

²⁸ Տե՛ս Cottier T. and Schefer K. “The relationship Between World Trade Organization Law, National Law and Regional Law”, Journal of International Economic Law, 1998, էջ 86:

²⁹ Տե՛ս Appellate Body Report, Brazil – Aircraft (Article 21.5 - Canada), para. 46: Ամբողջական տեքստը հասանելի է

http://www.wto.org/english/tratop_e/dispu_e/ab_reports_e.htm կայքում (16.04.2010 դրությամբ):

³⁰ St'u Cottier T. "The Challenge of WTO Law: Collected Essays", Published by Cameron May LTD, 2007, էջ 64.

³¹ St'u Judgment of the European Court of Justice of 10 of September 1996, Commission of the European Communities v. Federal Republic of Germany (International Dairy Arrangement), Case C-61/94, [1996] ECR I-3989, para. 52:

³² St'u Cottier T. and Schefer K. "The relationship Between World Trade Organization Law, National Law and Regional Law", Journal of International Economic Law, 1998, էջ 93:

³³ St'u նույն տեղում, էջ 93-95:

³⁴ St'u Eeckhout P. "The Domestic Legal Status of the WTO Agreements: Interconnecting Legal Systems", Common Market Law Review, 1997, էջ 53:

³⁵ St'u Bronckers M. "More Power to the WTO?", Journal of International Economic Law, 2001 էջ 41:

РЕЗЮМЕ

Развитие права Всемирной торговой организации

Статья под названием «Развитие права всемирной торговой организации» посвящена анализу права ВТО, как право регулирующее сферу товаров и услуг торговли и интеллектуальной собственности. В статье проводится анализ процессуальных и материальных правил и принципов ВТО, классификация ее источников. Подробному анализу подвергается Марракешское соглашение и его приложения, который является основным источником права ВТО, а так же раскрываются подходы выраженные в отношении применения данного Соглашения в прецедентном праве. Статья обращается также к соотношению международного права и права ВТО, а также к проблемам связанным с ролью права ВТО во внутригосударственной правовой системе.

В статье представлены также основные проблемы и подходы прямого, непосредственного действия и применения права ВТО во внутригосударственной правовой системе. В статье анализируются также вопросы, связанные с обращением государств-членов в органы разрешения споров, в случае нарушения права не предусмотренного соглашениями ВТО. В статье представлены ряд вопросов, связанные с толкованием норм права ВТО и даны возможные варианты для разрешения этих вопросов.

SUMMARY

Development of the WTO law

The article on "Development of the WTO law" provides detailed examination of the law of the World Trade Organization and a clear introduction to the basic principles. International trade needs to be properly regulated in order to serve for all countries and reduce poverty significantly. The article analyses the main sources of the WTO law including the substantive and procedural rules and the classification of the sources. The article refers to the WTO Agreement with its annexes which established World Trade Organization and is one of the main sources of WTO law.

Article also reflects the case law on the interpretation of implementation of this Agreement. It also the relationship between WTO law and the national law of WTO members. One of the other issues discussed in article concerns to the direct effect of WTO law in the national legal system. This article presents a number of issues relating to interpretation, implementation, development of the WTO law and gives options for resolving these issues.